



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
G-40



891.542-3

Հ-35

ՆԱՐ-ԴՈՍ

ՆՈՐԱԾԻՆ ՄԱՆՈՒԿԸ

Վ.Ա.Պ.Ա.Ր.Ը.Պ.Ա.Տ.

Տպարան Մայր Արտուր Մելքոնյան Եղմանի

1904

8105 . TD . 01
12 MAR 2011

891.99

Հ-40

Ա. Տ.


ՆԱՐ-ԴՈՒ

207

ՆՈՐԱԾԻՆ ՄԱՆՈՒԿԸ

1887
1888

092 - 13 / 138



Գ.Ա.Ա.ԲՇԱ.ՊԱ.Տ

Տպարան Մայր Արքուոյ Մերոյ Եղմիածնի

1904

ՆՈՐԱԾԻՆ ՄԱՆՈՒԿԸ

I.

Նուշանը—մի պատիկ, լզար կին—կուչ էր
եկել իրենց տան անկիւնում։ Այդ տուն կոչուածը
մի բաւական մեծ խրճիթ էր, որ երբեմն տիրոջ
կթան կովերի համար գոմի տեղ էր ծառայում։
Պատերն այնքան խսնաւ էին, որ քիչ էր մնում
չուր համեմ։ Դեմնից բաւական բարձր գանուած
մի հառչկ լուսամուտի չորս ապակիներից եր-
կուսը կոտրուած էին և տեղը թղթեր էին կըպ-
ցրած։ Ներսն այնքան մութն էր, որ օրուայ լոյսից
մտնողը պէտք է մի քանի բռպէ սպասէր, մինչեւ
որ բան տեսնէր։ Սակայն դրսից լոյսը մտնելուն
քիչ չէին օդնում և դրան տախտակները, որոնք
մի-մի մատ հեռացել էին իրարից։ Դրան այդ-
արանքներից լոյսը դրսից զուգահեռական երկար
գծեր էր շպրտում մինչև հանդէպի պատը։

Աշուն էր։ Ցուրտ քամին շրիշրխկացնելով
շարժում էր դուռը և ուսւալով ներս էր մտնում
նրա արանքներից։ Լուսամուտի երկու կոտրուած
ապակու տեղ կպցրած թղթերն ուռչում փռւում
էին գէպի ներս, դողում գողգողում էին և ապա
յանկարծ գէպի գուրս վիխւում շառաչիմով։

Նուշանն ամրող մարմնով գողալով կուչ էր
եկել հին լամերի վրայ և վերմակի նմանութիւն
ունեցող մի ինչ-որ բան էլ վրան էր առել։ Նա
անքում էր, և քամու կատաղի ձայների մէջ հա-
զիւ էր լուսում նրա տնկոցի ձայնը։ Երբեմն էլ

Дозволено Цензурою 24 Апрѣля 1904 г. г. Тифлисъ

Հղաձգաբար կծկում էր իւր լաթերի վրայ և
առանձները սեղմած մի-մի երկարատե սուր ճիչ
էր արձակում։

Նա երկունքի տանջանքի մէջ էր։ Հազիւ եւ
ըեսուն տարեկան, նա արդէն չորս որդի ունէր,
և մէկն էլ շուտով լոյս աշխարհ պիտի դար։ Ո՞ւմ
համար, ինչի համար...

Օրսկան հացի կարօտ ընտանիքի զաւակ էր
նա։ Հայր չունէր, մայր ունէր, որը լուացարա-
րութեամբ էր պարապում։ Եղբայրներ շատ ունէր,
բայց նքանք բոլորն էլ «պաժառնիք» էին. ջիր էին
կտրում և «աշխատած» փողով Խոջիվանիքի գե-
րեզմանատան մի մատուռի մէջ նստած՝ «զումար»
էին խաղում կամ արդանով քէֆ անում միկի-
տանիսանում։ Այդ էր նրանց պարապմունքը։
Հասկանալի է, որ նրանք մի դրոշի ոլէտք չէին
տան համար։ Մայրը բերնից կարել փող էր ետ-
ձեկ աղջկան մարդու տալու և իւր թաղման
համար։ Մի մնդուկ, մի ձեռք շոր և երեսուն
րուբի էլ օժիտ տուեց իւր աղջկան և տասչորս
տարեկան հասակում պսակեց։ Իսկ ինքը մի քանի
տարուց յետոյ մեռաւ և թաղուեց իւր ետ գցած
փողով։

Խելօք տղայ էր Շուշանի մարդը։ Ամուսնու-
թիւնից առաջ աշակերտ էր աղիւսի մի գործա-
րանում. լու աղիւս, թոնիր, քրեղան, չափ ու կուժ
այրել գիտէր։ Բայց ամուսնանալու ժամանակ,
Աստուած գիտէ ինչու, անպատուաբեր համարեց
իւր համար այդ պաշտօնը, թողեց ու դնաց տա-
ւար քշող գառաւ։ Հասաբները Սաղում մասցու-

տաւար ու ոչմար էին առնում, տալիս էին կա-
րապետին (այդպէս էր նրա անունը), և նա քշում
էր գէպի սպանդանոց։ Կամ թէ չէ, յաճախ պա-
տահում էր, որ սրբերին հաւատացող մարդիկ
մատաղացու էին առնում և տալիս էին կարա-
պետին, որ տանի մօրթի կամ մատաղ անողի
տանը, կամ միորեկ հեռու ուխտատեղում։ Եւ
դրա համար օր էր պատահում, որ նա ստանում
էր տասը կոպէկ և օր՝ երբ աշխատում էր մինչեւ
մի ուորփի։ Իսկ շատ յաճախ բան չէր պատա-
հում, հետեւաբար ոչինչ չէր ստանում։ Կինն օգ-
նում էր նրան—հինած էր մանում։ Բայց և այն-
պէս մարդ և կնոջ աշխատանքը հազիւ էր բաւա-
կանանում տան վարձը տալու—ամսական երկու
ուորփի—և ցամաք հաց առնելու։ Երբեմն, երբ
բան չէր պատահում, ամբողջ օրերով քաղցած էր
մնում ամբողջ ընտանիքը։ Այդպիսի դէսքերում
նրանք երանի էին տալիս փողոցի չներին, որոնք
գոնէ ոսկոր էին գտնում կրծելու համար։ Կա-
րապետի ընտանիքը գտնում օրեր էր քաշում մա-
նաւանդ ձմեռը, երբ, ճիշտ է, աշխատանք աւելի
էր լինում, քան ամառը, բայց կարիքն էլ սաս-
տիկ էր լինում. հարկաւոր էր տաք հագուստ,
վառելիք էր հարկաւոր։ Զմեռն այնպէս անցնում
էր, որ նրանց քուրսին գրեթէ երբեք չէր տա-
քանում։ Ինքը Կարապետը մի հին քուրը ունէր
և կոլուում էր մէջը, բայց կինն ունէր չթի, հա-
զար տեղ կարկատան գցած մի դերիս և մի պա-
տառուուն շալ, իսկ երեխաները տկոր-չիլախ
մնդիլուում էին ցրտից։

Զորս երեխաներից ամենամեծը տղան էր—
7.8 տարեկան։ Հայրը սկզբում նրան մանրունք
ծախողի մօտ աշակերտ տուեց. շաբաթը բերում
էր 20 կոպէկ, բայց մի տարուց յետոյ փախաւ
մանրունք ծախողի մօտից և սկսեց պարագ-սաւ
րապ թրե գալ իւր նման փոքրիկ կինտոների հետ։
Հօր ծեծը չազգեց նրան. տնից էլ փախաւ, և
ծնողները չէին իմանում, թէ որտեղ է նա օրը
մթնացնում և գիշերը լուսացնում։ Վերջապէս
հայրը մի անդամ տեսաւ, որ մի ոստիկան իւր
երեխայի թեկից բռնած տանում է ոստիկանաւ
տուն։ Նրան ըռնել էին գողութեան համար։

Սեդրակը (այդպէս էր կարապետի որդու
անունը) սպրդնել, թուքը ցամաքել էր, բայց ոս-
տիկանի հետ գնում էր հաստատ քայլերով, տղա-
մարդու պէս։ Նա տեսաւ հօրը, բայց ձայն-ձպուտ
չհանեց։

— Հայսդ ա, շան որդի, — ասաց հայրը և ան-
ցաւ գնաց։ Այդ բոպէին նա մի քանի ոչխար էր
քշում։

II.

Աշնան քամին ոռնում էր գուրսը։ Շուշանը
տնքում էր ներսը։ Երեխաներից երկուուը, մէկը
երկու, միւսը երեք տարեկան, ծալապատիկ նստած
էին խոնաւ գետնին փռուած մի հնամաշ խալիչի
վրայ և գլխով-ոտով ծածկուել էին հազարումի
ծակուծուկ ունեցող մի հին գեղնած եափնջու
տակ։ Այդ եափնջին թուխս նստած հաւի դեկ
էր կատարում, իսկ նրա տակը ցրտից պատա-

պարուած երեխաները ճուտերի էին նման։ Տեղը
տաք էր, և նրանք խաղում էին իրար հետ, եա-
փնջու տակից լաւում էին անհոգ քչփչոցի և եր-
բեմն ծիծաղի ձայներ։ Քամու կատաղի ժամանակ,
երբ գուռը սովորականից աւելի էր չրիչրիկում,
նրանք յանկարծ գլխներից յետ էին քաշում
եափնջու ծայրը, նայում էին դրանը մի այնպիսի
հայեացքով, որ կարծես թէ մարդու էին սպա-
սում, և, տեսնելով, որ ոչոք չկայ, ցրտից սար-
սուելով եափնջին նորից գլուխներն էին քաշում
և շարունակում իրենց երեխայական քչփչոցը։

Դուռը բացուեց և շտապով ներս մտաւ ոտա-
բորիկ, գլխաբաց, գզգզուած մազերով 6—7 տա-
րեկան մի աղջիկ։ Մառը քամին խանձել էր նրա-
գէմքը, մերկ ոտները կապտել էին։ Նալակին մի
տոպրակ ունէր։ Մի ոտը գետնին գիմհար տա-
լով, ցրտից սառած ձեռքերով հազիւ նա կարո-
զացաւ քամու ուժգին հոսանքի գէմ՝ յետ դնել
դուռը և ներսի սովորակը ձգել։

Եափնջին նորից շարժուեց, և երկու փոք-
րիկներն ուրախական ծլրտոցով ողջունեցին իրենց
քրոջ դալուստը։ Նոյն բոպէին եափնջին մի կողմը
թռաւ, և արդէն ոտի վրայ էին երկու գրեթէ
մերկ երեխաներ, ուրախ, երջանիկ գէմքով։ Յուր-
աք մոռացան նրանք, օրովհետեւ հացի հոտ առան։

— Վայ, ջանս-մանս, Սոնէն հաց ա բերել, —
ուրախութիւնից պար եկաւ մեծը։

— Վայ, ձանս-մանս, Սոնէն հաց ա բերել, —
կապկի պէս կրկնեց փոքրիկը։

Սոնէն, դուռը փակելուց յետոյ, արագուս-

թեամբ մօտեցաւ մօրը և տոպրակը շալակից վայր
բերեց:

— Այ, հաց էլ տուխն, պանիր էլ, — ասաց նա
այնպիսի ուրախութեամբ, որ կարծես թէ շա-
լակով սոկի էր բերել:

Բայց և այնպէս նրա ատամները ցրտից
դարկում էին իրար:

Մայրը տանջալից հայեացքով նայեց նրան:

— Տուր էդ լակոտներին ուտեն, — ասաց նա
և նոյն բոսկին սոսկալի ցաւից կուչ ու հուպ ե-
կաւ, հազիւ զսպելով իրեն, որ չճշայ:

Բայց Սոնէն կամեցաւ նախ տաքացնել ցրտից
սառած ձեռները: Եւ մինչդեռ նո մղկտացող տասը
մատը կպցրել էր շրթունքներին և բերնի գոլոր-
շին արտաշնչում էր նրանց վրայ, երկու «լակոտ-
ները» յափշտակեցին նրա սաների առաջ դրուած
տոպլակը և հաւաքական ոյժով քարշ տուին դէպի
իրենց տաքացնող եափնջին: Քոյրը կատուի արա-
գութեամբ թռաւ նրանց ետեկից և գեռ կիսա-
ճանապարհին պինդ փամփաչեց երկուսի դլիխին
էլ: Հարուածը երկի սաստիկ էր, որ ամենափոք-
րիկը բարձրաձայն սկսեց լաց լինել: Նրանից մեծն
էլ պոռշ արեց, բայց զսպեց իրեն:

— Այ, կտորուեք գուք, կտորուեք, — ուժառ-
պառ, հազիւ լսելի ձայնով անիծեց մայրը: — Աղջի,
ինչ ես ուզում էդ լակոտներից:

— Բա խի՞ չեն մուլափ տալի, — հանգատու-
թեամբ նկատեց Սոնէն, տոպրակը տարաւ դրեց
խալիչի վրայ, ծալապատիկ նստեց առաջը և բե-
րանը բաց արեց: Տոպրակը կիսով չափ լիքն էր

հացի չոր կտորտանեքով և երեսին պանրի փշրանք
էր թափուած: Լաց եզօղ երեխան լոեց և միւսի
հետ գնաց նստեց տոպրակի առաջ:

— Չեռը չտաք, թէ չէ կըսպանեմ, — սպառ-
նաց քոյրը և վեր կացաւ, որ թարեքից մի քըե-
ղան վերցնի պանրի փշրանքը մէջն ածելու:

Բայց քազցած երեխաները չվախեցան այդ
սպառնալիքից. հազիւ քոյրը մի երկու քայլ էր
արել, որ նրանք ձեռները կոխեցին տոպրակը և
իւրաքանչիւրը թռցրեց հացի առաջին պատահած
կտորը: Սոնէն այս անգամ էլ կամեցաւ վրայ
համնել, բայց արդէն ուշ եր. երեխաներից մէկը
մի անկիւնը թռաւ, միւսը — միւս և իւրաքանչիւրն
ագահաբար արդէն կրծում էր իւր յափշտակած
որսը, երբ քոյրը նախ մէկին սկսեց թակել, յետոյ
միւսին: Երեխաները կուչ էին եկել մէկը մի, միւսը
միւս անկիւնում, յափշտակած հացի կտորները
պինդ շեքներն էին կոխել, որ քոյրը չխլի և, թէեւ
քրոջ անխնայ հարուածները բաւական ցաւ էին
պատճառում նրանց տկլոր մարմնին, բայց նրանք
ձայները փորն էին դցել, լաց չէին լինում — երեխ
զգում էին, որ յանցաւոր են և իրենց արժանի
պատիմն են կրում: Սակայն վերջի վերջոյ Սոնին
աջողուեց երկուսի ձեռքից էլ խլել յափշտակած
հացի կտորները: Այս անգամ այնպիսի ճիչ ու
ծղրտոց ընկաւ խրճիթը, որ այլ ևս չէր լուսում
քամու կատաղի ձայնը:

— Բա, ես ձեզ չառեցի, որ ձեռը չտաք —
իրատական տոնով նկատեց քոյրը:

— Ճօ, տափը մտած, ինչ ես ուզում էդ լա-

կոտներից, — տաճնջուած ձայնով աղաղակեց մայրն աղջկայ վրայ: — Տուր զահրումար անեն, էլի՛ ես իմ ցաւի հետ ըլեմ, թէ ձեզ հետ Ա՛յ, կտորուէք դուք, կտորուէք:

— Բա խի՞ չեն մուլափ տալի, — հանդսոււթեամբ կրկնեց Սոնէն և գնաց, որ քրեղան վեր բերի թարերից:

Մօր միջամտութիւնն առիթ տուեց երեխուներին աւելի ևս բարձրացնելու իրենց ձայնը ձղձղում էին խողի ճուտերի պէս:

Մայրն այլ ևս չդիմացաւ, վեր թռաւ տեղից, կատաղած վաղեց դէպի աղջիկը և այնպէս պինդ ձիգ տուեց նրա մաղերից, որ նա ձեռքից բաց թողեց երեխաներից խլած հացի կաորները և մի սոսկալի ճիչ արձակելով փոռեց գեանին: Դրանից յետոյ նուշանն անլուր անէծքներ թափելով քարշ եկաւ նորից դէպի իւր լաթերը և նորից կուլուեց նրանց մէջ, Այժմ երեխաները միանդամից լոեցին և նրանց քոյրն էր, որ գետնին վալոր ընկած լաց էր լինում:

— Զէնդ կտրի, թէ չէ, էս ա, էլի վեր կացայ:

Երեի մօր այդ սպառնալիքն աղդու էր, որ Սոնէն յիբաւի ձայնը կտրեց, վեր կացաւ, հաւաքեց գետնին թափուած հացի կաորտանը և ուռած-փռուած շպրտեց երեխանց առաջը, որոնցից խլել էր:

— Բէ՛ը, չոռ արէք:

Երեխաներն խոկոյն վրայ թափուեցին քաղցած գայլերի պէս:

Սոնէն թարերից վերցրեց մի քրեղան, գնաց

նստեց հացի տոպրակի առաջ և սկսեց պանրի փշուրները ջոկել ու քրեղանն ածել: Երեխաները վախվանելով մօտեցան նրան և սկսեցին զսդինդալ: Նրանը պանիր էին պահանջում:

— Բէ՛ը, չոռ արէք, — կրկնեց քոյրը և պանրի մի-մի փշուր թափեց նրանց վրայ:

Երեխաներն ագահաբար վրայ ընկան գետնին թափուած պանրի փշուրները հաւաքելու:

Սոնէն պանրի փշուրները հացի կտորատնքից ջոկում և քրեղանն էր ածում մեծ գործ կատարող մարդու լրջութեամբ: Նա մի առանձին հպարտութիւն էր զգում, որ այդքան պանիր էր բերել իրենց ծանօթ մի լնտանիքից, ուր յաճախ կամ ինքը, կամ մարը մի փոր հացի համար գնում էին ամբողջ օրով կտմաւոր աղախնի գեր կտտարելու — սամափար սրբելու, բակն աւելելու, ծծկեր երեխային պահելու և այլն: Պանիրը հացից ջոկելիս, Սոնէն, ի հարկէ, չմոռացաւ իրեն, թէև ճանապարհին իւր բաժինն արդէն կերել էր: Նո ջոկեց հացի համեմատաբար մի փափուկ կտոր ու պանիր մի մեծ փշուր և սկսեց ուտել: Երեխաներն իրենց բաժինը ձեռաց վերջացրին և նորից սկսեցին վսդինդալ: Քոյրն այս անդամ այնքան բարեհաճ գտնուեցաւ, որ առանց ծեծ ու կռուի մի-մի կտոր հաց ու պանիր էլ շարաեց նրանց վրայ: Այդ օրը մի տօն էր երեխաների համար: — Հացի հետ նրանը պանիր էլ էին ուտում... Այդպիսի երջանկութիւն շատ քիչ էր պատահում նրանց:

Երբ նրանք կշտացրին իրենց քաղցած փորը, նորից մտան եափնջու տակ, այս անդամ հիւրա-

սիրելով և քրոջը, որ արդէն հաշտուել էր նրանց
հետ Երեքն էլ գոհ էին իրենց վիճակից. վորները
կուշտ էր, ետպին տաք, էլ ի՞նչ էր հարկաւոր։—
Ովնչ եւ նրանք ուրախ-զուարթ քչփչում էին ի-
րենց միայն հասկանալի բաներ։

Այս ինչ աշնանային կարծառեւ օրը արագա-
պէս մթնում էր, և առանց այն էլ մուժի խրճիթը
թաղում էր մթութեան մէջ։ Դրան տախտակների
արանքից ներս թափանցող լոյսի շերտերն այժմ
հաղիւ էին նշմարւում։ Օրը տարաժամելու հետ
քամին կարծես աւելի սաստկանում էր և սպառ-
նում էր լուսամուտի թուղթը պատռելով ներս
խուժել ամբողջ թափով։

— Աղջի, — կանչեց Շուշանը։

Սոնէն գլուխը հանեց ետափնջու տակից։
— Վեր կաց, էն անտէր ճրագը վառի։

Յրտից սարսռելով Սոնէն վեր կացաւ իւր տաք
տեղից, վառեց թարեքի վրայ դրուած փոքրիկ լամ-
պը և վաղելով նորից մտաւ ետափնջու տակ։ Լամպն
այնքան լոյս չէր արձակում, որքան ծուխ, որովհե-
տեւ ապակին կիսով չափ կոտրուած էր. ծուխը
հաստ շերտերով լիղել էր նրա պատերը և այժմ
այդ շերտերի վրայ նոր շերտեր էր աւելացնում։

Ետափնջու տակ քչփչոցի ձայները շարունակում
էին. ամենից շատ լաւում էր քրոջ ձայնը, ինչպէս
երեւում էր, նա հեքեաթ էր պատմում։ Բայց այդ
քչփչոցի ձայները շուտով տեղի տուխն յօրանջում-
ների։ Սոնէն նորից գուրս եկաւ ետափնջու տակից,
յայտնի չէ որտեղից քարշ տուեց մի փոքրիկ դո-
շակ և վերմակ, անկողին պատրաստեց, որի վրայ
կուչ եկան երեքը միասին, վերմակը և ետափնջին
վրաներն առան ու նոյն ըոստէին էլ քննեցին։

III.

Մինչդեռ նրանց մայրը իւր լաթերի վրայ կուչ
ու հուպ գալով շարունակում էր անքալ զալուած
ձայնով. ցաւերը դնալով սաստկանում էին։ Նա
մենակ էր, ոչոք չունէր, որ օդնէր իրեն։ Երկու
երեխայ նա այդպէս, առանց «տատմօր» օդնութեան
էր բերել, որովհետեւ ազքատ էր։ Նոյն այդ ազքա-
տութիւնն էր պատճառը, որ իւր մինչև այժմ բե-
րած բոլոր երեխաները ամիսներով «հարամ» էին
մնացած՝ մարդ չէր ճարւում, որ «հալալէր»—
կնքահայր գառնար։ Եւ այդպէս «հարամ» էլ կը-
մեծանային նրանք, եթէ դարձեալ այն ընտանիքը
չինէր, որն այդ օրը մի տոսպրակ հացի կտորտանք
և պանրի վշտուներ էր ուղարկել. այդ ընտանիքի
հայրն էր, որ «հոգու խաթէր» իւր որդուն ուղար-
կում էր Կարապետի երեխաներին մկրտելու, մի
քանի ուութի ծախս անելով։ Շուշանը երախտա-
գիտութեամբ էր յիշում այդ բարի ընտանիքի
անունը, որը քաղցած ժամանակ միշտ հաց էր
տալիս իւր երեխաների համար, տկլոր ժամանակ
— հին հագուստեղէն։ Բայց Շուշանն ամօթխած
կին էր. նրա երեսը չէր բռնում ամեն կարիք ե-
ղած ժամանակ դիմելու այդ ընտանիքին, ուստի
մեծ մասամբ սասկալի ազքատութիւն էր կրում։
Մեծ որդուց նա յոյսը բոլորովին կտրել էր. այդ
որդին «պաժառնի» էր դարձել և մի քանի անգամ
արդէն բանտ էր նստել։ Մարդը մեծ մասամբ
պարագ էր և վերջերն էլ սկսել էր իրեն գինու-
տալ այնպէս որ գործ պատահած ժամանակն էլ

Հաղիւ մի-մի անգամ միքանի փունտ ցամաք հաց
էր բերում տուն։ Պատահում էր, որ կարապետը
օրերով, նոյնիսկ շաբաթներով տան երես չէր տես-
նում, որովհետեւ ոչխար կամ տաւար էին յանձ-
նում իրան հեռու տեղ քշելու։ Այժմ էլ նա քա-
ղաքումը չէր. մի ամբողջ հօտ մատաղցու ոչխար
էր քշել Բոյնիսի ո. Գէորգ ուխտատեղին, որի
տօնն էր այդ շաբաթ։ Ամբողջ երկու երեք շաբաթ
կուշանար, և գնալիս ապրուսոի ոչ մի կոտէկ չէր
թողել տանը, որովհետեւ չունէր եւ նուշանը, եր-
կունքի ծանր օրերի մէջ, մնացել էր մենակ, իւր
երեք երեխաների հետ, գուռն երեսին ետ գրած,
քաղցած, տկլոր: Յուրաքան էլ միւս կողմից էր նեղութ:
Աշնան և ձմրան ամիսներին քաղցն այնքան զգալի
չէր այդ աղքատ ընտանիքի համար, որքան ցուր-
տը. հաց միշտ կարելի էր ճարել, թէկուզ մու-
րալով, քայլ ածուխ, փայտ ով կրտար:

Մի ամբողջ շաբաթէ, որ քամին չի գտարում. փշում մարդու երես է խանձում, մտնում է խրճիթի հազար ու մի ծակուծուկերից. Լաթելը այնքան ոյժ չունին, որ տաքացնեն Շուշանի կմալքացած մարմինը. Կարելոյն շափ նա աշխատում է կծկուել, բայց և այնպէս նրա ոտները սառոյց են կտրուել:

Բայց ցուրտն ինքնըստինքեան։ Երկունքի ցաւ-
ւերն են այժմ, որ սոսկալի տանջանքներ են պատ-
ճառում նրան։ Նա այլ ես չե զապօւմ իրեն։ Նա
կուչ ու հուփ է գալիս, աղաղակում։ Խրճիթում
լուռում է երեք քնած երեխաների հաւասար շըն-
չառութիւնը, թնդանօթ անդամ արձակես, նրանք
չեն զարթնիլ։ Թարեքին դրուած լամպի կոսրուած

ապակին արդէն բոլորովին ուղել է. ու ծովին ու կարմիր բոցը գուրս են գալիս ապակու միջից վառուած թոնքի նման. Խրճիթը հետզհետէ լրցում է խեղդող ծխով. Բայց քամին օդնում է, գրան արանքներից գուրս է քշում այդ ծովը, փոխարէնը մաքուր ցուրտ օդ ներս բերելով:

Նուշանի զգացած ցաւերն երբեմն նստում
են: Այդ միջոցներին նա մնում է անշարժ և ա-
կանջ է դնում, թէ ինչպէս քամին շառաչինով
շարժում է դուռը, թէ ինչպէս լուսամուտին կլազ-
ցրած թղթերը բրբռում են: Երբեմն նրա ականջին
է դիպջում քնած երեխաների հաւասար շնչա-
ռութիւնը:

Եւ այդ խաւարի ու գառն աղքատութեան
մէջ մեծացած, իւր կեանքն անասունի պէս քարշ
տուած կնոջ գլխումն էլ մտքի նման մի բան է
շարժւում: Նա մտածում է, թէ ինչին է պէտք,
որ նոր որդի պիտի ծնիւ ի՞նչ օրումն են արդէն
եղածները, որ դրանց վրայ մէկն էլ պէտք է ա-
ւելանայ: Տղայ լինի, էլի ջհաննամը, թող թէ կուզ
«պաժառնի» գուրս գայ, մեծի նման: բայց որ
յանկարծ աղջիկ լինի...

Բայց ցաւերը կրկին նորոգւմ էն, և նուշանը
կտրում է իւր մտածմունքների թելը. նա թաւա-
լագլոր է գալիս իւր լաթերի վրայ սոսկալի տան-
ջանքով, անտառնի պէս.

Աղամամութին, երբ հարևանի բակում աքա-
ղաղն սկսեց կանչել իւր ծռզբուղուն, Սոնէն աշ-
քերը բաց արեց և գլուխը հանեց վերմակի և
եափնջու տակից: Առաջին բանը, որ տարօրինակ

թուաց նրան, այդ այն էր, որ թարեքին գեռես
վառւում էր ծխից արդէն բոլորովին սևացած
լամպը Յետոյ մի անսովոր ձայն դիպաւ նրա առ
կանջին. կարծես թէ կատու էր մլաւում Նա նըս-
տեց անկողնում և բնազդմամբ նայեց մօր կողմը:
Մայրն իւր լաթերի վրայ նստած ինչ-որ տարօ-
րինակ շարժողութեան մէջ էր: Կատուի մլաւոցի
պէս ձայնն այնտեղից էր գալիս: Նա կամաց վեր
կացաւ և ցրտից սարսուելով մօտեցաւ մօրը: Մօր
գոգին նա մի պստիկ, շատ պստիկ երեխայ տե-
սաւ, մերկ, կարմիր: Մայրը, ամբողջ մարմնով նրա
վրայ թեքուած՝ անդամները պինդ սեղմել էր իրար
և ձեռքերով հուպ էր տալիս երեխայի կոկորդը:
Նորածին մանուկը տարօրինակ կերպով շարժում
էր իւր պստիկ կարմիր ստներն ու ձեռքերը: Նրա
ձայնն այլևս չէր լսւում:

Սոնէն յանկարծ ճշաց ինքն էլ չէր խմանում
—ուրախութիւնից, որ իւր մայրը երեխայ էր բե-
րել, թէ սարսափած այն բանից, ինչ որ անում էր
մայրն իւր նորածին երեխային...

Շուշանը ցնցուեց և միանգամից բաց թողեց
մանուկը: Նա նոր տեսաւ իւր աղջկան: Կարճ ժա-
մանակ մայր ու աղջիկ՝ երկուսն էլ սոսկումով նա-
յում էին իրար աչքերի: Յետոյ մայրը ուժապառ
յետ ընկաւ իւր լաթերի վրայ և ասաց:

—Ով որ հարցնի, կասես մեռած էր...

Եւ ցրտից պատոպարուելու համար նա վեր-
մակը վրան քաշեց:

Վերմակի վրայից մի գունդ մօխ նման դէպի
մօր ստները գլորուեց խեղդամահ եղած նորա-
ծին մանուկը... Այօլուկութիւն ԳՐԱԴԱՐԱՆ



ԳԻՒՆԵ Յ ԿՈՊԵԿ

ՀՀ Ազգային գրադարան



NL0357719

46215